ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԳԿ ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ուսումնական հաստատություն՝ Լեռնուտի միջնակարգ դպրոց

Մասնագիտություն՝ Պատմություն

Թեմա՝ Պատմության կապը այլ գիտությունների հետ

Կատարող՝ Մինասյան Լիլիթ Միքայելի

Ղեկավար՝ Ալեքսանյան Կարինե

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ I

Պատմության կապը այլ գիտությունների հետ.....4

1.1. Միջառարկայական կապերի ստեղծումը բնական և հումանիտար գիտությունների հետ.....4

1.2. Հայոց պատմության կապը համաշխարհային պատմության հետ.....7

Գլուխ II

Միջառարկայական կապերի ստեղծման հնարավորությունները պատմության դասին.....12

2.1. Միջառարկայական կապերի ստեղծումը բանավոր շարադրանքի ընթացքում ...12

2.2. Ինտերակտիվ դասի պլան՝ ԽԻԿ համակարգով.....14

Եզրակացություն.....19

Օգտագործված գրականության ցանկ.....21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիտության և արտադրության ինտեգրման ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը՝ միջգիտական կապերը: Քանի որ ուսումնական առարկաներն ուսուցանում են գիտությունների հիմունքները, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած տեղեկություններով, այլ իրականությունն արտացոլող միջառարկայական կապերով: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը: Վերջին տասնամյակներում պատմության մեթոդիկայում մշակվել և կիրառվում են ուսուցման նոր մեթոդներ, որովհետև այդ են պահանջում մեր հասարակության զարգացման, վերակառուցման, գիտատեխնիկական առաջընթացի միտումները:

Աշխատանքի նպատակն է հիմնավորել միջառարկայական կապերի դերը ուսուցման մատչելիության, գիտելիքների որակի բարձրացման գործում: Ներկայացնել միջառարկայական կապերի հնարներն ու միջոցները պատմության դասավանդման ընթացքում, պարզել, թե որ գիտությունների հետ է կապված պատմությունը:

Ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք պատմահամեմատական, պատմավերլուծական և պատմաքննական մեթոդները:

Թեմայի արդիականությունը: Դասապրոցեսի ընթացքում ուսուցիչներն երբեմն սովորողներին մատուցում են նեղ առարկայական գիտելիքներ, որի արդյունքում դասը ստացվում է միատար, որոշ աշակերտների հետաքրքրությունը նվազում է: Սակայն, երբ կապում են դասն այլ առարկայի հետ դասի նկատմամբ բարձրանում է հետաքրքրությունը, խթանվում է աշակերտների տրամաբանությունը, վերլուծելու կարողությունը համակարգված և ընդլայնված մտածողությունը:

ԳԼՈՒԽ I

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ԱՅԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

1.1. Միջառարկայական կապերի ստեղծումը բնական և հումանիտար գիտությունների հետ

Պետք է գիտակցել, որ քաղաքակրթության զարգացում, պատմական առաջընթաց տեղի չէր ունենա, եթե չլինեին հայտնագործություններ մաթեմատիկայի, երկրաչափության, ֆիզիկայի, քիմիայի, աստղագիտության, կենսաբանության, աշխարհագրության և այլ գիտությունների բնագավառներում: Պատմությունը դպրոցում դասավանդվող այն առարկան է, որը կարծես ի մի է բերում այդ բոլոր գիտությունների ձեռքբերումները, աշակերտների համար բացահայտում դրանց նշանակությունը: Պատմության շատ դասաժամեր ինտեգրված դասերի օրինակներ են, հատկապես գիտությանն և մշակույթին վերաբերող թեմաները:

Ֆիզիկա - Ներկայացնենք, թե ինչ կապ ունի պատմությունը ֆիզիկայի հետ: Օրինակ՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին ատոմային ռումբի կիրառումն ամերիկացիների կողմից, ռեակտիվ հրթիռների նշանակությունը Մեծ Հայրենականում և այլն: Այսինքն եթե բացատրվի, թե ինչ ազդեցություն ունեցան ատոմային ֆիզիկայի ձեռքբերումները Երկրորդ աշխարհամարտի ելքի վրա, ապա դա կնպաստի սովորողների կողմից ինքնուրույն վերլուծություններ կատարելուն և թեմայի հեշտ յուրացմանը:

Կենսաբանություն - Եթե ուսուցիչը ճիշտ ձևով ներկայացնի Չարլզ Դարվինի և Ֆլեմինգի պատմությունը, նա աշակերտների մեջ հետաքրքրություն կառաջացնի թե՛ կենսաբանության, թե՛ պատմության հանդեպ՝ ստիպելով այդ գիտությունները դիտել որպես մեկը մյուսին լրացնող գիտություններ:

Բուսաբանություն - Խոսելով որևէ ճակատամարտի մասին և նկարագրելով տեղանքը՝ ուսուցիչը միջառարկայական կապ է ստեղծում բուսաբանություն առարկայի հետ: Նա պետք է հիշեցնի, թե տեղանքում ինչպես ճիշտ կողմնորոշվել՝ բացատրելով, որ այդ գործում մեզ կօգնեն ծառերը, քանի որ նրանք հակված են իրենց ճյուղերն ուղղել դեպի հարավ, դեպի լույս, իսկ լույսը շատ է հարավում, որ մամուռները խոնավասեր են, խուսափում են արևի կիզիչ ճառագայթներից, լինում են հյուսիսային կողմում: Կամ, երբ խոսք է լինում թթվածնի մասին, որ օրվա մեջ

հսկայական չափով թթվածնի կորուստ է լինում և չի վերջանում: Մենք գիտենք, որ բույսերը կատարում են օդային սննդառություն այսինքն տերևների միջոցով օդից վերցնում են ածխաթթու գազը և արտադրում են թթվածին և այլն:

Աշխարհագրություն - Պատմությունն անմիջական կապ ունի նաև աշխարհագրության հետ, դրա մեջ է մտնում քարտեզի հետ աշխատանքը: Խոսելով որևէ ճակատամարտի մասին՝ քարտեզի վրա պետք է ցույց տրվի ճակատամարտի վայրը, զորքի շարժման ուղղությունը և այլն: Եթե խոսվում է Հայաստանում գոյություն ունեցող կառույցների մասին (Իջևան – Հրազդան երկաթուղին, Գորիս – Լաչին մայրուղին, Արփա – Սևան թունելը և այլն) կարելի է քարտեզի վրա ցույց տալ նրանց տեղադրությունը: Տնտեսական աշխարհագրությունից ուսումնասիրվում է պետական մոնոպոլիստական կապիտալիզմը, իսկ նորագույն պատմությունից՝ դարձյալ նույն հարցին անդրադառնում ենք «Ռուսաստանը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին» թեման ուսուցանելիս: Այստեղ երկու առարկաների ուսուցիչները պետք է համատեղ մեթոդական աշխատանք կատարեն այն պայմանով, որ աշխարհագրության դասին ուսուցիչը սովորողների ուշադրությունը կենտրոնացնի տնտեսական զարգացման օրինաչափությունների վրա, իսկ պատմության դասավանդման ժամանակ բացահայտվեն բանվորական և ազգային-ազատագրական շարժումները, պատերազմների էությունը, մշակույթի զարգացման հարցերը և այլն, իսկ տնտեսական հարցերի մասին տրվի համառոտ տեղեկություն:

Գրականություն - Պատմության դասընթացի ուսուցման ընթացքում կարելի է ստեղծել նաև լրացնող կապեր, որոնք օգտագործվում են տվյալ առարկաների հարակից առարկային վերաբերող հարցերը պարզաբանելու համար: Այդ տեսակետից բազմազան են պատմության և գրականության դասընթացների կապերն ու մեթոդները: Գեղարվեստական գրականության ընթերցանության հանձնարարումից մինչև գրողի ստեղծագործության հասարակական նշանակության բացահայտումը: Գեղարվեստական գրականության երկերից առանձին հատվածների օգտագործումը բարձրացնում է պատմության դասավանդման հուզականությունն ու դաստիարակչական ներգործությունը, դրանց զգալի մասը հանձնարարվում է իբրև արտադասարանական ընթերցանություն: Երբեմն հասարակական կյանքը լիարժեք կերպով է արտացոլվում գեղարվեստական գրականության մեջ:

Հայրենական Մեծ պատերազմի և հետպատերազմյան տարիների թեմաների վերաբերյալ կա հարուստ գեղարվեստական գրականություն, որից պատմության առարկայական նյութերին համապատասխան պետք է ընտրություն կատարել: Չէ որ Մեծ հայրենականի տարիներին ժողովուրդը դրսևորեց իր հերոսական նկարագիրը: Հայրենական Մեծ պատերազմի հերոսների կերպարներ կերտել են շատ գրողներ, որոնցից պետք է տեղին մեջբերումներ անել՝ ստեղծելով միջառարկայական կապեր: Օրինակ, Բորիս Պոլևոյն իր «Պատմվածք իսկական մարդու մասին» գրքում խոսել է տարբեր տարիքի և մասնագիտության տեր մարդկանց սխրանքների մասին, որոնք՝սովորողներին ճանաչողական և դաստիարակչական առատ նյութ կտան:

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը նշել են, որ գեղարվեստական գրականության ճանաչողական նյութերը հաճախ շատ ավելի խոր և բազմակողմանի են եղել, քան բուրժուական հասարակական գիտության տվյալները: Կ.Մարքսը 19-րդ դարակեսի անգլիական ռեալիստական վիպասանների մասին գրելէ. «Անգլիայի վիպագիրների ժամանակակից փայլուն դպրոցի ցայտուն ու պերճախոս նկարագրությունները աշխարհի առջև բացահայտեցին ավելի շատ քաղաքական ու սոցիալական ճշմարտություններ, քան այդ արեցին քաղաքագետները, հրապարակախոսները և բարոյագետները միասին վերցրած:

Հայ հեղինակներից Մուրացանը, Ռաֆֆին և ուրիշներ անցյալի հերոսների միջոցով փորձել են ներկայացնել իրենց ժամանակի իրականության պատկերը: Իրենց ստեղծագործություններում անցյալի պատմական հերոսներին հարություն տալը այն նպատակին է ծառայում, որպեսզի փառաբանեն նոր պայքարները:

Հոգեբանություն - Պատմության դասավանդման մեթոդիկան սերտ կապերի մեջ է հոգեբանության հետ, քանի որ այդ առարկայի իմացությունն օգնում է ուսուցչին՝ ճիշտ հասկանալու սովորողների զարգացման օրինաչափությունները, տարիքային առանձնահատկությունները: Հոգեբանությունը բացահայտում է այնպիսի կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ, ինչպիսիք են՝ դպրոցականների ըմբռնումները, մտապատկերների ստեղծումն ու հիշողության, երևակայության, մտածողության, խոսքի զարգացումը: Հոգեբանությունն ուսուցչի ուշադրությունը կենտրոնացնում է աշակերտի, անձի ընդունակությունների վրա և ուսուցչին տալիս է մի շարք

անհրաժեշտ խորհուրդներ՝ դիտարկումներ կատարելու պատմական նյութի խոր յուրացման համար:

Արվեստ - Բնագիտական և հումանիտար առարկաների տեսական վերլուծություններին օգնում են կերպարվեստից ստացած գիտեիքները: Արվեստով և տեխնոլոգիայով պետք է զբաղվել ոչ միայն նկարչություն ընտրած սովորողներին: Դա զարգացնում է ճաշակ, գեղեցիկը նկատելը, գրագետ և գեղեցիկ հարաբերվելը և այլն: Արվեստով զբաղվելու նպատակը, գեղեցիկ և ճիշտ նկարելը չէ, այլ գեղագիտորեն դաստիարակված անհատ լինելն է: Պարապմունքը առավել հետաքրքրիր է և արդյունավետ, երբ մի առարկան համագործակցում է մյուսի հետ: Ահա մի քանի նախագծեր, որը իրականացվել է հիմք ընդունելով միջառարկայան կապերի գաղափարները:

1.2. Հայոց պատմության կապը համաշխարհային պատմության հետ

Պատմության դասավանդման ժամանակ միջառարկայական կապեր կարելի է ստեղծել գրեթե բոլոր առարկաների հետ՝ մասնավորապես համաշխարհային պատմության հետ, քանի որ հայոց պատմությունը կազմում է համաշխարհային պատմության մի օղակը: Ուստի այն պետք է ուսումնասիրվի ընդհանուր պատմության հետ միասնության մեջ: Այդ միասնությունը կարելի է ապահովել.

1. միևնույն դարաշրջանի պատմական դեպքերի ու երևույթների համաժամանակյա ուսուցման միջոցով,
2. ընդհանուր պատմական հասկացությունների ու գաղափարների յուրացման միջոցով, որոնք կկոնկրետացվեն հայոց պատմության փաստական նյութի վրա,
3. համաշխարհային դեպքերի և իրադարձությունների (համաշխարհային պատերազմներ, մշակույթ և այլն) միացյալ ուսումնասիրման միջոցով,
4. ներառարկայական կապերի մշտական իրականացման միջոցով,
5. ներածական դասերի, ընդհանրացնող և ամփոփիչ կրկնությունների միջոցով[1]:

[1] Ղուկասյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Հայոց պատմությունը 6-7-րդ դասարաններում, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2007, էջ 5:

Պատմական երկու դասընթացների կապն ու հիմնական գծերի համեմատումը հնարավորություն է ստեղծում ձևավորելու գիտելիքների ամբողջական համակարգ համաշխարհային պատմության վերաբերյալ, պարզելու մարդկության պատմության ճակատագրի ընդհանուր կողմերը և առանձնահատկությունները, որոշելու մեր երկրի տեղն ու դերը համաշխարհային պատմության մեջ, նրա ավանդը մարդկային քաղաքակրթության ստեղծման ու զարգացման գործում:

«Հին Եգիպտոս» թեմայի առնչությամբ նշում ենք, որ Հայկական լեռնաշխարհի հնագույն պետությունները սերտ կապեր են ունեցել Եգիպտոսի հետ: Որպես ասվածի վառ ապացույց կարելի է բերել Կարմիր բլուրում հայտնաբերված եգիպտական Սոխմետ դիցուհու հախճապակյա հիերոգլիֆագիր հմայիլի օրինակը: Դպրոցականներին ասում ենք նաև, որ հայերը Եգիպտոսին առնչվել են մեր թվարկությունից առաջ: Փարավոններից ոմանք խնամիական կապեր են ունեցել հայ թագավորների հետ: Ականավոր պատմաբան Ա. Ալպոյաճյանը իր՝ «Եգիպտոսի նահանգը և հայերը» ուսումնասիրության մեջ գրում է, որ Տուչրատոհին հայոց թագավորի գեղանի դստերը կնության առավ Ամենոֆիս 4-րդ փարավոնը՝ տալով նրան «Մեծ իշխանուհի, իշխանուհի բոլոր կանանց և տիրուհի հարավի և հյուսիսի» տիտղոսը[2]: Այդ իշխանուհին պատմությանը հայտնի է Նեֆերտիտի անունով: Հայտնի են հայազգի շատ իշխանավորներ՝ Ներսես Բասենցին, Վարդան Ալ-Ռումին, Բադրալ Ջամալին, Ներսես Կամսարականը, Հովհաննես և Արտավան Արշակունիները, Բեհրամ Ալ-Արմանին և ուրիշներ, որոնք պետական, զինվորական բարձր պաշտոններ են վարել Եգիպտոսում:

Օրինակ՝ հին աշխարհի պատմության դասընթացի ուսումնասիրության ժամանակ «նախնադար» բաժինը ուսուցանելիս նշում ենք, որ Հայկական բարձրավանդակը նույնպես եղել է մարդկության հնագույն բնօրրաններից մեկը՝ անհիշելի ժամանակներից սկսած, և Հայաստանի շատ վայրերում (Արզնի, Արտին, Նուռնուս, Գյումրի, Վանաձոր, Սանահին, Սևանա լիճ և այլն) հայտնաբերվել են հնագույն բնակավայրեր:

Հին Միջագետքի և Բաբելոնի դասանյութերն ուսուցանելիս՝ պետք է ցույց տալ Հայկական լեռնաշխարհից սնվող Տիգրիս և Եփրատ գետերը: Տիգրիսի վտակներից

[2] Ղևոնդյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2001, էջ 136:

մեկի՝ Ֆարկինի ափին է գտնվել Տիգրանակերտ քաղաքը, հակիրճ պատմել նրա հիմնադրման մասին, ապա ավելացնել, որ Ք.ա. 5-րդ դարում Հայաստանը Եփրատ գետի վրայով առևտրական կապեր է ունեցել Բաբելոնի հետ և արտահանել մեծ քանակությամբ գինի, գյուղատնտեսական ապրանքներ: Հերոդոտը վկայում է. «Այժմ ես կպատմեմ, թե ինչն է իմ կարծիքով, որ ամենից զարմանալին է իրենց քաղաքից հետո սրանց մոտ: Նրանց նավերը, որոնք գետի վրայով գալիս էին Բաբելոն, կլոր էին և բոլորը կաշեպատ: Հայերի երկրում, որոնք ապրում էին ասորեստանցիներից վերև, կտրում էին ուռենիներ, շինում նավի կողերը և պատում կաշվե ծածկոցով, տալով հատակի ձև: Լցնում են ամբողջ նավը ծղոտով, բեռնում են և թողնում, որ իջնի գետնի վար: Մեծ մասամբ նավերով տանում են գինով լիքը արմավենու տակառներ…: Ամեն մի նավում գտնվում էր մեկ էշ, իսկ մեծ նավերում՝ մի քանիսը: Բաբելոն հասնելուց և բեռը ծախելուց հետո նրանք վաճառում են նաև նավի կմախքը և ամբողջ ծղոտը, իսկ կաշին բարձում են էշի վրա և գնում իրենց հայրենի երկիրը»[3]:

Ասորեստանի մասին խոսելիս ուսուցիչը կարող է բերել մի փաստ, որ ուրարտացիները վերցրել են ասորական սեպագիրը, ավելի պարզեցրել են այն և հարմարեցրել են իրենց լեզվին՝ ստեղծելով իրենց սեփական գիրն ու գրականությունը: Արվեստից մեզ հասած նմուշները (շենքեր, տաճարներ, զենքեր, բրոնզե արձանիկներ և այլն) ցույց են տալիս, որ Ուրարտուն ուներ զարգացման ավելի բարձր մակարդակ՝ Միջագետքի երկրների համեմատությամբ:

Հին Հունաստանի պատմությունն ուսուցանելիս՝ հիմնականում անդրադառնում ենք հայկական և հունական մշակույթի փոխհարաբերություններին, ցույց տալով, որ հունականի ազդեցությամբ հատկապես զարգացել էր թատերական արվեստը: Արտաշատ և Տիգրանակերտ քաղաքներն ունեին իրենց թատրոնները, որտեղ բեմադրվում էին նաև Հունաստանի ողբերգակների երկերը: Հին հունական ճարտարապետության, քանդակագործության մասին խոսելիս՝ տեղեկություններ են տրվում նաև հայկական մոնումենտալ կոթողներից՝ Գառնիի թագավորական բերդի և հեթանոսական տաճարի մասին: Քանդակագործական արվեստից կարելի է հիշատակել Փոքր Հայքի Սատաղ քաղաքից գտնված Անահիտ աստվածուհու կիսանդրու մասին, որն այժմ պահպանվում է Բրիտանական թանգարանում, ինչպես

[3] Նույն տեղում, էջ 137:

նաև նույն աստվածուհու ոսկեձույլ մարդահասակ արձանի մասին(Ք.ա. 34թ.) որը հափշտակեցին հռոմեացիները Եկեղյաց գավառի Երիզա ավանի տաճարից:

Կարթագենի զորավար Հաննիբալի Իտալիա կատարած արշավանքի առիթով էլ ասվում է, որ նա եղել է Հայաստանում և նրա խորհրդով է Արտաշես թագավորը Ք.ա. 180-160 թվականների ընթացքում կառուցել Արտաշատ քաղաքը, որին հռոմեացիները անվանում էին «Հայաստանի Կարթագեն»: «Ստրուկների ապստամբությունը Սպարտակի առաջնորդությամբ» դասանյութը հաղորդելիս՝ նկարագրվում են ապստամբությունը վայրագությամբ ճնշող բանակի հրամանատար Կրասոսի գործողությունները:

Միջառարկայական կապ ստեղծելով՝ խոսվում է հայերի դաշնակից պարթևների դեմ Կրասոսի արշավանքի (Ք.ա. 53թ.) նրա սպանության և կտրված գլուխը Արտաշատ՝ պարթևների թագավոր Օրոդեսին բերելու մասին, որը եկել էր տոնախմբության՝ թագաժառանգ Բակուրի և Արտավազդի քրոջ ամուսնության կապակցությամբ: Այնժամ արքունի թատրոնում բեմադրվում էր Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը, դերասան Յասոնը իրականացնում է Արտավազդի մտահաղացումը, ողբերգության մեջ պահանջվող բուտաֆորային գլխի փոխարեն վերցնում է Կրասոսի գլուխը և բեմ մտնելով արտասանում. «Տուն վերադառնալով, մենք բերում ենք լեռներից նոր սպանված եղջերուն՝ բախտավոր մի որս»[4]:

Հռոմեական նվաճումների մասին դպրոցականներին պատմելիս՝ պետք է հիշեցնել, որ բազմիցս նրանք փորձել են նվաճել Հայաստանը, բայց համառ դիմադրության են հանդիպել, իսկ պարտության դեպքում հայերը չեն ընկճվել, և իբրև օրինակ բերել հետևյալ հատվածը. «Ք.ա. 34թ. Հայաստանի դեմ տարած հաղթանակից հետո հռոմեական զորավար Անտոնիոսը վերադառնալով Եգիպտոս, իր հետ տանում է Արտավազդ Երկրորդին, նրա կնոջը և երկու երեխաներին, որոնց ոսկե շղթաներով անց էին կացնում հաղթական շքերթի առջևից, իսկ Կլեոպատրան նստած էր արծաթապատ բեմում, ոսկե գահի վրա, Անտոնիոսի կողքին: Հռոմեացիները գերեվարվածներին համոզում էին, որ Կլեոպատրայի առջևից անցնելիս նրան անվանեն «թագուհիների թագուհի» և փրկություն աղերսեն: Բայց հայ գերիները մահը գերադասելով աղերսանքով ձեռք բերված ազատությունից, խրոխտ ու

[4] Նույն տեղում, էջ 139:

արհամարհանքով անցնում են գահավորակի մոտով: Այդ մասին հույն պատմագիր Դիոն Կասիոսը գրում է. «Հայերը ցույց տվեցին իրենց ոգու արիությունը, ուստի և փառավոր անվան արժանացան»: Իսկ Վերգիլիոսը «Էնեականի» մեջ գրում է. «Արաքսը չի հանդուրժում կամուրջներ», այսինքն Հայաստանը չի հանդուրժում օտարի լուծը:

Չպետք է մոռանալ միաժամանակ դպրոցականներին ասել, որ հռոմեացիների դեմ արյունահեղ ճակատամարտերում հայերն իրենց շատ անգամ փառքով են պսակել և որպես օրինակ բերել 62թ. Արածանիի ափին՝ Հռանդեայում հռոմեական զորքերի ծանր պարտությունը, որտեղ անպարտելի համարվող հռոմեական լեգեոնները խայտառակվեցին և ծնկաչոք անցան հայերի «լծի» տակով, որը ամենամեծ ստորացումն էր:

ԳԼՈՒԽ II

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

2.1. Միջառարկայական կապերի ստեղծումը բանավոր շարադրանքի ընթացքում

Միջառարկայական են կոչվում այն կապերը, որոնք ստեղծվում են տարբեր առարկաների համապատասխան թեմաների կամ ուսումնասիրվող հարցերի միջև:

Պատմության ուսուցչի խնդիրն է ուսուցումն այնպես կազմակերպել, որ բնության և հասարակական կյանքի բոլոր օրենքները, որոնք քննարկվում են տարբեր ուսումնական առարկաների ծրագրերում, դիտվեն միասնության և փոխադարձ կապի մեջ[5]: Այդ առումով էլ միջառարկայական կապերը կարելի է բաժանել մի քանի տեսկաների: Դրանք կարող են լինել.

1. Ծրագրարային - ժամանակային, որ նախատեսվում է տարբեր առարկաների ծրագրերում, և որ ուսումնական նյութերն ըստ ժամանակի դասավանդվում են այնպիսի հաջորդականությամբ, որ հնարավոր է լինում մի առարկայից դպրոցականի ստացած գիտելիքներն օգտագործել հարակից առարկաների նոր գաղափարները պարզաբանելու համար:
2. Լրացնող կապեր, որոնք օգտագործում են տվյալ առարկայի հարակից առարկային վերաբերող հարցերը պարզաբանելու համար:
3. Գաղափարական կապ, որով պահանջվում է այս կամ այն առարկայի դասընթացում քննարկվող միևնույն գաղափարը մեկնաբանել միևնույն ձևով՝ արդի գիտական մակարդակին համապատասխան:

Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև

[5] 101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար, խմբ.՝ Մերենյի Ա., Սաբո Վ., Տակաչ Ա., Բուդապեշտ, 2006, էջ 55:

եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»: Նա գրել է, որ բնության մեջ բոլոր առարկաներն ու երևույթները գտնվում են փոխադարձ կապի մեջ, ուստի դրանց վերաբերող տարբեր առարկաների գծով գիտելիքներն էլ պետք է ուսուցանվեն միմյանց լրացնելու միջոցով: Կոմենսկին միջառարկայական կապերը համարել է «Գիտությունների մեծ հարստություններ ձեռք բերելու լավագույն միջոց»:

Որպես գիտելիքների ամբողջություն պատմությունը սերտ կապերի մեջ է այլ գիտությունների՝ հատկապես ընդհանուր մանկավարժության հետ: Այս կապերի շուրջ եղել են տարբեր կարծիքներ և ձևավորվել տարբեր ուղղություններ: Դրանցից առաջինը պայմանականորեն կարելի է անվանել դիդակտիկական ուղղություն /Պ. Լեյբենգրուբ, Ֆ. Կորովկին և ուրիշներ/: Այս տեսակետի կողմնակիցները հակված էին համադիդակտիկական սկզբունքներն ու մեթոդները փոխադրել պատմության դասավանդման բնագավառը՝ չբացահայտելով, կամ անլիարժեք կերպով բացահայտելով պատմության, որպես ուսումնական առարկայի առանձնահատկությունները: Ըստ այդ տեսության՝ պատմության դասավանդման մեթոդիկան վերածվում էր համադիդակտիկական սկզբունքների ու մեթոդների սոսկական շարադրման և համեմված էր լինում միայն պատմության դասընթացից քաղված օրինակներով:

Միջառարկայական կապերին անդրադարձել են նաև Ա. Դիստերվիգը, Կ. Դ. Ուշինսկին, հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը և ուրիշներ: Միջառարկայական կապերի օգտագործման գիտական հիմնավորմանն անդրադարձել է նաև Ն. Կ. Կրուպսկայան: Նա իր «Դիդակտիկական մոտեցում առանձին առարկաների ուսումնասիրմանը» և «Մեթոդական գրառումներ» հոդվածներում ցույց է տվել պատմության, հասարակագիտության, մայրենի լեզվի, գրականության, աշխարհագրության և մյուս առարկաների միջև եղած բնական և տրամաբանական կապերը, նրանց առնչությունները: Հայ իրականության մեջ վերջին

տասնամյակներում միջառարկայական կապերի հիմնախնդիրներին անդրադարձել են Մ. Մելքումյանը, Ի. Ղարագյոզյանը և ուրիշներ:

2.2. Ինտերակտիվ դասի պլան՝ ԽԻԿ համակարգով

Ամիս, ամսաթիվ - 05.11.2021թ.

Դպրոց - ……

Դասարան -10-րդ

Առարկա - Հայոց պատմություն

Աշակերտների թիվը - 20 աշակերտ /12 աղջիկ, 8 տղա/

Դասի թեմա - Հայոց թագավորությունները Ք. ա. 331- 201 թվականներին

Դասի տևողությունը - 45 րոպե

Դասի նպատակները՝

ա/ Ակադեմիական

1. Իմանալ՝ ով է Ալեքսանդր Մակեդոնացին, և ինչ ընթացք ունեցավ նրա Արևելյան արշավանքը,
2. Իմանալ, թե ինչու Մակեդոնացին չնվաճեց Հայաստանը,
3. Իմանալ, թե ինչու Մակեդոնացու տերությունը շատ արագ տրոհվեց:[6]

բ/ Սոցիալական

1. Զևավորի ազգային ավանդույթներին հավատարմության, հպարտության և արժանապատվության զգացումներ,
2. Սերմանի պատմական հզոր կերպարների գործերը գնահատելու և որոշ գծերով նրանց նմանվելու ձգտում:

գ/ Կիրառական

- Կառուցողական մտածողության ձևավորում

դ/ Զարգացնող

- Միջառարկայական կապերի ստեղծում

ե/ Դաստիարակչական

[6] Ղուկասյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Հայոց պատմությունը 6-7-րդ դասարաններում, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2007, էջ 77:

- Գիտակցի իրեն որպես ազգային արժեքների կրողի, պահպանողի, հարստացնողի ու փոխանցողի,
- Արժնորի հայ ժողովրդի պայքարը օտար զավթիչների դեմ մղված պայքարում:

Անհրաժեշտ պարագաներ - դասագիրք, քարտեզ, գրատախտակ, տետր, գրիչներ:

Ցուցադրական նյութեր – նկարներ Ալեքսանդր Մակեդոնացուց:

Հիմնական հասկացություններ – Ալեքսանդր Մակեդոնացի, Իսոս, Գավգամելա, Երվանդ III, Միթրաուստես, Բաբելոն, հելլենիզմ, Սելևկյան տերություն, Շամ, Արշամ, Սամոսատ, Բագարան:

Միջառարկայական կապեր- համաշխարհային պատմություն, գրականություն, աշխարհագրություն, նկարչություն:

Դասի տիպը- Ներածական դասախոսություն, նոր նյութի ուսումնասիրում:

Դասի ընթացքը

Խթանման փուլ- 10 րոպե

Քայլ 1.

Դասը կարելի է սկսել Ալեքսանդր Մակեդոնացու նկարների ցուցադրությամբ: Դրանից հետո ուսուցիչը փորձում է պարզել՝ արդյո՞ք աշակերտները կռահել են, թե որն է դասի թեման: Աշակերտների արձագանքը չի ուշանում: Մինչև թեմայի ուսումնասիրումն ուսուցիչը կարող է ներածական զրույցով և հարցերի միջոցով վերականգնել աշակերտների ունեցած գիտելիքները Ալեքսանդր Մակեդոնացու և նրա արշավանքների մասին, որոնք արդեն ծանոթ են համաշխարհային պատմությունից: *(4 րոպե)*

Քայլ 2.

Չափազանց օգտակար է համարվում պրիզմայի մեթոդական հնարի կիրառումը: Ուսուցիչը գրատախտակին գրում է *Ալեքսանդր Մակեդոնացի* մեկնաբառը և առաջարկում աշակերտներին հայտնել մեկնաբառի ազդեցությամբ իրենց մտքում ծագած առաջին երկու պատահական բառերը: Դրանք ևս գրանցվում են գրատախտակին, որից հետո շարունակվում է ասոցիատիվ մտածողության վրա հենվող այս աշխատանքը մինչև պրիզմայի փակվելը: Աշխատանքն ավարտելուց հետո պետք է մեկնաբառը միացնել վերջնաբառի հետ, փորձել կապ գտնել նրանց

միջև: Աշակերտները կարող են մտածել, փնտրել, գտնել և ներկայացնել այդ կապն արտացոլող մեկ նախադասություն կամ միտք: *(6 րոպե)*



Իմաստի ընկալում- 20րոպե

Քայլ 3.

Պրիզմային հաջորդում է ուսումնական նյութի իմաստի ընկալումը: Դասագրքի տեքստը ըստ ենթավերնագրերի բաժանվում է 5-հոգանոց համագործակցային 2 փոքր խմբերի և առաջարկվում ընթերցել, ընկալել, ըմբռնել դրանց բովանդակությունը: Իսկ մյուս երկու խմբերը կարդում են հատվածներ Պլուտարքոսի «Համեմատական կենսագրություններից» և բանավոր ներկայացնում դասարանին, որպես լրացում: *(5 րոպե)*

Խումբ 1- Կարդա՛լ և սովորե՛լ «Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքը և Հայաստանը» ենթավերնագիրը /էջ 73- 75/:

Խումբ 2-Կարդա՛լ և սովորե՛լ «Հայկական թագավորությունները և Սելևկյան տերությունը» ենթավերնագիրը / էջ 75- 76/:

Խումբ 3- Կարդա՛լ և սովորե՛լ հատվածներ Պլուտարքոսի «Համեմատական կենսագրություններից»:

Խումբ 4- Կարդա՛լ և սովորե՛լ հատվածներ Պլուտարքոսի «Համեմատական կենսագրություններից»:

Քայլ 4.

Աշակերտները իրենց հանձնարարված ենթվերնագրերը և տրված գրականությունից հատվածները ուսումնասիրում են քառաբաժան հնարի միջոցով: Ուշադրություն դարձնելով հետևյալ հիմնահարցերին /հիմնահարցերը ուսուցչի կողմից նախօրոք մշակված և գրված են գրատախտակին/: *(12 րոպե)*

1. Ի՞նչ էիք տեսնում տեքստը կարդալիս:
2. Ի՞նչ էիք զգում տեքստը կարդալիս:
3. Կապը իրական կյանքի հետ:
4. Նոր վերնագիր:

Ներկայացված էր Մակեդոնացու դեպի Արևելք կատարած արշավանքներն և մղած ճակատամարտերը:	Մարդկային անսահման հզորություն և նորանոր նվաճումների ձգտում:
Անընդհատ հզորանալու ձգտում և դավաճանության ու շահերի բախման արդյունքում տերության պառակտում:	Մակեդոնացին և Հայաստանը

Քայլ 5.

Քառաբաժան հնարի միջոցով ընթերցումն ավարտելուց հետո կազմակերպվում է խմբային քննարկում: *(3 րոպե)*

Կշռադատման_փուլ- 8 րոպե

Քայլ 6.

Այնուհետև խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը դասարանին: Տեղի է ունենում համադասարանական քննարկում, հայտնում են տեսակետեր, մոտեցումներ, գրքում առկա նյութերը լրացվում են կարդացած գրականությունից: Ուսուցիչը ուղղորդում է քննարկման ընթացքը, պարզաբանում չհասկացված հատվածները: Այս ձևով խմբերը միմյանց են փոխանցում ընթերցանության ընթացքում իրենց ձեռք բերած գիտելիքները:

Գնահատում և անդրադարձ-5 րոպե

Խմբերը գնահատվում են ըստ՝

- Պատասխանների հիմնավորվածության,
- կարևոր հիմնախնդիրների առանձնացման /գլխավորը երկրորդականից տարանջատելու կարողություն/,
- համագործակցության ընթացքում դրական վարքագծի դրսևորման հատկանիշներով:

Խմբերի բոլոր անդամները գնահատվում են հավասարապես:

Տնային առաջադրանք-2 րոպե

Սովորել դասը պատմել, կարդալ հատվածներ Պլուտարքոսի «Համեմատական կենսագրություններից»: Կազմել ժամանակագրական աղյուսակ:

Իրադարձություն	Թվական
Ալեքսանդր Մակեդոնացի	Ք.ա. 356- 323 թթ.
Գրանիկոսի ճակատամարտ	Ք. ա. 334 թ.
Իսոսի ճակատամարտ	Ք. ա. 333 թ.
Գավգամելայի ճակատամարտ	Ք. ա. 331 թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, վերը շարադրվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ՝

1. Միջառարկայական կապերի իրագործումը նպաստում է գիտելիքների խոր և բազմակողմանի յուրացմանը, գիտական հասկացությունների և օրենքների ձևավորմանը, ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործմանը և նրա օպտիմալ կազմակերպմանը, գիտական աշխարհայացքի ձևավորմանը, նյութական աշխարհի ընդհանրացմանը, բնության և հասարակության մեջ երևույթները փոխկապվածության մեջ ընկալելուն: Բացի այդ, դրանք նպաստում են սովորողների գիտելիքների գիտական մակարդակի բարձրացմանը, զարգացնում են տրամաբանական մտածողությունն և ստեղծագործական ունակությունները: Միջառարկայական կապերի իրագործումը հնարավորություն է ստեղծում խնայելու ժամանակը, սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունների և հմտությունների ձևավորման համար ստեղծելու նպաստավոր պայմաններ:

2. Պատմության ուսուցչի խնդիրն է ուսուցումն այնպես կազմակերպել, որ բնության և հասարակական կյանքի բոլոր օրենքները, որոնք քննարկվում են տարբեր ուսումնական առարկաների ծրագրերում, դիտվեն միասնության և փոխադարձ կապի մեջ:

3. Միջառարկայան կապերի շնորհիվ առավել մատչելի ու դյուրին է դառնում նոր նյութը ինչպես բնագիտական, այնպես էլ հումանիտար առարկաների ուսուցման դեպքում: Զարգացնում է սովորողի մի շարք կարողություններ, հատկապես մտածելու և տրամաբանելու տարատեսակ կարողությունները:

4. Միջառարկայական կապերի մեծ հնարավորություններ կան ինչպես հայոց պատմության, այնպես էլ ընդհանուր պատմության դասընթացների ուսումնասիրման ժամանակ: Ուսուցչի խնդիրն է կատարել համապատասխան ընտրություն: Հայ ժողովուրդն իր անցյալով առնչվել է աշխարհի հնագույն և ներկա շատ ժողովուրդների հետ, սակայն պատմության դասընթացները ի վիճակի չեն ըստ ամենայնի արտացոլել դրանք, և այդ աշխատանքը թողնված է ուսուցչին, որը նա պետք է իրականացնի միջառարկայական կապերի միջոցով, խնամքով,

բարեխղճորեն ընտրի փաստերն և օգտագործի դասավանդման ընթացքում՝ որպես լրացուցիչ նյութեր:

5. Մանկավարժական պրակտիկայում երբեմն նույնացնում են միջառարկայական կապերն և ինտեգրացված դասերը: Այժմ էլ ինչպես բարձր դասարաններում, այնպես էլ արտադասարանական առարկայական խմբակների պարապմունքներում, կազմակերպվում են ինտեգրացված դասեր՝ նվիրված կոնկրետ որևէ տարողունակ համալիր ընտրովի թեմայի ուսումնասիրմանը:

Այսպիսով, ուսուցումն արվեստ է, իսկ ուսուցման վարպետությունը՝ անհրաժեշտություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ղուկասյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Հայոց պատմությունը 6-7-րդ դասարաններում, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2007, 88 էջ:
2. Ղևոնդյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2001, 263 էջ:
3. Մելքոնյան Ա., Ավետիսյան Հ., Մովսիսյան Ա., Հովհաննիսյան Պ., Դանիելյան Է., Հայոց պատմություն (հումանիտար հոսք), 10-րդ դաս., Երևան, 2014, 255 էջ:
4. Մերենյի Ա., Սաբո Վ., Տակաչ Ա., 101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար, Բուդապեշտ, 2006, 63 էջ:
5. Պապոյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, 2013, 298 էջ:
6. Քոսյան Ա., Գրեկյան Ե., Հարությունյան Գ., Համաշխարհային պատմություն (հումանիտար հոսք), 10-րդ դաս., Երևան, 2009, 223 էջ:
7. Հանրակրթական հիմնական դպրոցի «Հայոց պատմություն» առարկայի չափորոշիչ եվ ծրագիր (6-9-րդ դասարաններ), ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Երևան, 2012, 80 էջ:

Համացանցային պաշարներ

1. Ուսուցման մեթոդներ - https://www.slideshare.net/torosian/ss-9876301- (հասանելի է 11.08.2022թ.)
2. Ուսուցման մեթոդներ - http://documents.tips/documents/-5565b367d8b42a48268b45f1.html- (հասանելի է 06.08.2022թ.)